

ՄԱՌԱ ՀԱՄԼԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հոգեբանություն» մասնագիտությամբ մագիստրոս



2019 թ.-ին Մառա Հարությունյանը գերազանցության դիպլոմով ավարտել է Շիրակի պետական համալսարանի Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի բակալավրիատը՝ «Հոգեբանություն» մասնագիտությամբ, իսկ 2021 թ.-ին՝ մագիստրատուրան:

2020 թ.-ին Մառա Հարությունյանը ճանաչվել է ՀՀ լավագույն ուսանող: 2018-2020 թթ.-ին Կարիտասի «Էմիլի-Արեգակ» կենտրոնում եղել է կամավոր, աշխատել հաշմանդամ երեխաների հետ:

Մագիստրատուրայում սովորելիս աշխատել է Գյումրու «Ժեստ» հոգեբանական կենտրոնում որպես հոգեբան: Այժմ աշխատում է «Կարիտաս-Արեգակ» ԲՀ-ում:

2020 թ.-ին մասնակցել է ՇՊՀ-ի հանրապետական ուսանողական գիտաժողովին և տպագրել է հոդված «Շեղվող վարք ունեցող դեռահասների անձնային առանձնահատկությունները» վերնագրով:

Մառա Հարությունյանը վերապատրաստվել և լիցենզավորվել է որպես լոգոպեդ, իսկ 2020 թ.-ին՝ ճանաչվել որպես Շիրակի մարզի լավագույն կամավոր:

